**Կյանքի բանալին (2012)**
**128ր**
**Տարիքային սահմանափակում՝** 16տ.

***Սցենարի հեղինակ և ռեժիսոր՝ Կենջի Ուչիդա***
***Դերերում՝ Մասատո Սակայ, Տերույուկի Կագավա, Ռյոկո Հիրոսուե***



(c)2012"Key of Life" Film Partners

35-ամյա գործազուրկ Սակուրայը (Մասատո Սակայ) ձգտում էր դերասան դառնալ, սակայն ապարդյուն: Նա որոշում է ինքնասպանությամբ վերջ տալ ամեն ինչին, բայց նախ գնում է հասարակական բաղնիք՝ ինքնամաքրվելու: Բաղնիքում նա հանդիպում է մեծահարուստ Կոնդոյին (Տերույուկի կագավա), ով ընկնում է և կորցնում հիշողությունը: Հանկարծ Սակուրայը փոխում է պահարանի բանալիները, գողանում այդ մարդու իրերը և որոշում է հանդես գալ իբրև մեծահարուստ Կոնդո: Սակուրայը չգիտի, որ Կոնդոն զբաղվում է ապօրինի բիզնեսով, որն իրեն հարկադրում է առնչվել զորեղ և զայրացած յակուձա գանգստերների հետ: Այդ ընթացքում Կոնդոյին համոզել են, որ իրականում ինքը ձախողված դերասան Սակուրայն է, և նա տարակուսում է նման կյանքի ցավալի իրողությունից: Բարեբախտաբար հիվանդանոցում նա հանդիպում է գեղեցիկ Կանաէին, ով, տենչալով ամուսնություն, օգնում է «Սակուրային» ուշքի գալ: Ի վերջո, իսկական Կոնդոն գիտակցություն է գալիս, բայց մինչև Կանաէի հետ նոր կյանք սկսելը, նա պետք է լուծի բազմաթիվ խնդիրներ, որոնք առաջացել են ինքնակոչ մարդու պատճառով: